

509

# Գ Ա Յ Լ

Հ Յ Պ Մ Ա Ն Ի

Թարգմանեց

Տիրուհի Կոստանեանց

---

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մ. Շարամբէ, Կիկի փ. ա. 21

1894

83 օ.

7-96

8305.

3-96

un

83

2-87

Գ Ա Յ Լ

Հ Օ Ֆ Մ Ա Ն Ի

10249

Թարգմանեց

Տիրուհի Կոստանեանց

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Ճպ. Մ. Շարադէ. || Տիպ. Մ. Շարադզէ.

1894

10.

6022  
Дозв. цензур., Тифлисъ, 8 Марта 1894 г.



4 873  
41

Центральная Библия им. Ленина  
Ф И З Л  
ИНВЕНТАРИЗАЦИЯ 1926 г.



Եկ մեծ գիւղում  
ոչ հեռու Լէհա-  
կան սահմանից ապ-  
րում էր մի գիւ-  
ղացի իւր կնոջ և  
որդու հետ:

Որդին առողջու  
ժիր էր. նա արդէն տասն  
և չորս տարեկան էր, երբ  
հայրը սաստիկ հիւանդացաւ: Կանչեցին  
գիւղական բժշկին. նա դեղատումս զրեց.  
բայց դեղը պէտք է բերել տափն քաղա-  
քեց, որը գիւղից երկու ժամուալ ճանա-  
պարհ էր:

2004

Խորը ձմեռ էր, ձիւնը ծածկել էր գետինը. և չնայելով լուսնի փայլին, հարևաններից ոչ մեկը չէր ուզում հիւանդին օգնել՝ գնալ քաղաք դեղ բերելու։ Ամենքն էլ վախենում էին երկար ճանապարհ գնալ գեշերով արդ ցրտին և մանաւանդ սարսափում էին գալերից, որոնք վաղուց չէ, որ սկսել էին թափառել ճանապարհների վերա։

Որդին տեսնելով մօր արտասուքներն ու հօր յուսահատութիւնը, սաստիկ խղճաց նոցա և ասաց.

Հայրիկ ջան, տուր ինձ դեղատոմուը. ես ինքս կ'երթամ քաղաք դեղ առնելու։

Դու ինչպէս կարող ես գնալ, դեռ փոքր ես և կարելի է ճանապարհը չգրանես. պատասխանեց Հայրը:

Ե՞հ, այդ արդէն իմ գործս է, ասաց տղան։ Ուղիղ որ ես գեռ երբէք քաղաքում չեմ եղել, բայց շատ պարզ գեշեր է և լուսնեակն այնպէս է փայ-

լում, որ ամբողջ ճանապարհն երևում է ցերեկուալ նման։ Ես եղջելուի պէս վագել գիտեմ և կարծեմ, սիրելի Հայրիկս, ես այնքան մեծ եմ, որ կարող եմ քեզ օգնել։

Դու բարի տղալ ես Ստեփան, ասաց Հայրը, բայց ի՞նչ օգուտ, եթէ գալլը քեզ վերայ լարձակուի, դու ոյժ չես ունենար նորա հետ կռուելու և նա քեզ կ'ուտէ։

Հետո կըտանեմ իմ գաւազանս, պատասխանեց տղան։ Եւ Սստուած ողորմած է, ինձ կ'օգնէ, որովհետև ես գնում եմ ոչ թէ չար, այլ բարի գործի համար, պահապան հրեշտակն ինձ կը պաշտպանէ ամեն տեսակ փորձանքից։ Ուրեմն, Հայրիկս, թող որ գնամ։

Լաւ, գնա որդիս, միայն թէ տես, որ չշփոթուես և գլուխդ չկորցնես, եթէ ճանապարհին քեզ մի բան պատահի։

Ստեփանն առաւ իրան հաստ գաւազանը, դեղատոմուը գրականը դրեց և

Հօրն ու մօրը մնաս բարեւ ասելով, ուշ  
րախ ուրախ ճանապարհ ընկաւ: Զիւնը,  
որ ճռճռում էր նորա ոտքերի տակ, պըս-  
սլըդում էր լուսնի փալլից. և քաղաքի  
ճանապարհը պարզ երեւում էր: Ստեփա-  
նը շտապ շտապ գնում էր, ոչնչից չվա-  
խենալով: Նա ամեն բան մոռացել էր և  
մտածում էր միայն Աստուծոյ ու իրան  
Հիւանդ Հօր մասին:

Նա գիշերուայ ժամը 10-ին տանից  
դուրս գնաց և արդէն  $11\frac{1}{2}$ -ին կանգ-  
նած էր քաղաքի գեղատան առաջ: Կէս  
ժամից լետոյ գեղը պատրաստ էր. նա  
խնամքով փաթաթեց նորան, դրեց գըր-  
պանը և կրկին ճանապարհ ընկաւ:

Նա հանգիստ սրտով վերագառնում  
էր. տուն հասնելուն մնացել էր մի-  
այն կէս ժամ, բայց նա գեռ ոչ մի վատ  
բանի չէր հանդիպել: Յանկարծ նա լսեց  
ունոց. լետ նալեց և տեսաւ որ մէկ գալլ  
արագ արագ մօտենում է իրան:

ԱՌ իմար բան, ասաց Ստեփանը:

Հիմայ հայրս պէտք է երկար ժամանակ  
սպասէ գեղին: Եթէ ես գալլին չսպանեմ,  
նա ինձ հանգիստ չի տայ: Ուրեմն, մը-  
տածեց նա, աւելի լաւ է սպասեմ, որ նա  
յարձակուի. բայց գուցէ նա փախչի, երբ  
տեսնի, որ ես իրանից չեմ վախենում:

Ստեփանը կանգնած մնաց, ձեռ-  
քումն ամուր սեղմելով իւր հաստ փալ-  
տը: Ալդ ժամանակ նա լանկարծ լիշեց  
Հօր խօսքերը «զլուխդ չկորցնես» և  
սկսեց մտածել, թէ ինչպէս անէ, որ շու-  
տով լաղթէ գալլին:

Ապա լառաջ գալլի քթին խփեմ,  
լանկարծ նորա միտքն ալդ եկաւ. եթէ  
ես շատ ամուր և լաջող խիեմ նորա  
քթին, նա տեղն ու տեղը կըսատկի:

Միւնոյն ժամանակ գալլն աւելի ու  
աւելի մօտենում էր. նա ոռնում էր կա-  
տաղութիւնից ու քաղցից: Նա իւր եր-  
կար, կարմիր լեզուն կախ էր զցել և  
սպիտակ ու սուր ատամները փալլում էին  
ալդ լուս գիշերին: Տղայից քսան քայլ

Հեռու նա յանկարծ կանգնեց ու սկսեց  
նայել իւր համարձակ հակառակորդին.  
Նա կռացաւ գետնին, իւր փալուն աչ-  
քերը գցեց Ստեփանի վերայ, կարծես ու-  
զում էր չափել թշնամու ոյժը:

Ե՞լ դու, արիւն խմող աւագակ,  
ինչո՞ւ չես գալիս. բարձր ձայնով գոռաց  
Ստեփանը:

Սլդ ըոպէին գալին ահագին տարա-  
ծութիւն մի անգամից ցատքեց և ուզեց  
լարձակուել Ստեփանի վերայ, բայց նա  
առանց շվոթուելու այնպիսի մեծ ոյժով  
գալիի քիթին խփեց, որ գալին իսկոյն շըն-  
չասպառ ընկաւ ձեան վերայ:

Ա՞լ քեզ իմ պատասխանս. ան-  
պիտան, չար գայլ, ասաց նա և արգէն  
ուզում էր ճանապարհը շարունակել, երբ  
յանկարծ մտածեց, որ լաւ կըլինի գալին  
հետը տուն տանի, կաշին քերթել տայ  
ու ծախէ:

Նա գետնից բարձրացրեց գալին,  
դժուարութեամբ գցեց ուսերի վերայ,

այնպէս որ իրան գլուխը գազանի լետի  
թաթերի մէջ մնաց. նա ձեռքերով ա-  
մուր բռնել էր գալիի ոտները:

Իեռը ծանր էր և Ստեփանն էլ չէր  
կարող յառաջուայ պէս շուտ շուտ գնալ:

Բայց նա արգէն իրանց գիւղի ծալ-  
քին էր, երբ յանկարծ գալիը շարժուեց,  
ոտքերը սկսեց քաշքաշել ու ատամները  
կըճտացնել:

Ստեփանն իսկոյն մտածեց գալիին  
վայր գցել և շտապով փախչել. բայց նա  
հալարտ էր. չուզեց այդ անել և նորից  
յիշեց հօր խրատը «գլուխդ չկորցնես»:

Ապասէ, դու ինձ չես վախեցնի,  
ասաց նա և գազանի լետի ոտքերն այն-  
պէս ամուր սեղմեց, որ նա էլ չէր կա-  
րող շարժուել. Նա իրանց տանը շատ մօ-  
աեցել էր և բոլոր ոյժը հաւաքեց, որ  
շուտով տեղ հասնի.

Լաւ որ Ստեփանն այնպէս էր ջըն-  
ջընել գազանի քիթը, որ նա էլ չէր կա-  
րող կծել. բայց թէ բեռն այնքան ծանը

էր, որ խեղճի ճակատը քրտնքով ծածկուել էր: Գալլը շարունակ ոտքերը շարժում էր և նորա սուր ճանկերը մտնում էին խեղճ տղայի ուսերի մէջ:

Ստեփանը սկսեց օգնութեան կանչել, բայց ոչ մի մարդ չլսեց նորա ձայնը. բոլորն էլ քնած էին: Նա յանկարծ սարսափեց և արդէն պատրաստ էր իւր բեռը զետին գցելու, բայց նորից միտնեկան այս խօսքերը «գլուխդ չկորցնես:» Եւ նա մի կերպ քաշքանով իւր ծանր բեռը, մեծ դժուարութեամբ հասաւ իրանց խրճիթին:

Եւ արդէն ժամանակն էր. գալլի ճանկերը խորն էին մտել Ստեփանի ուսերի մէջ, որտեղից արիւն էր կաթկը-թում:

Հալլիկ, կանչեց նա, հալրիկ, հըամալէ դուռը բաց անել. այստեղ կանգնած է քո Ստեփանը. նա բերել է իւր ուսերի վերայ գրած մի գալլ. շուտ բացէք, թէ չէ ես նորան բաց կըթողնեմ:

Բաղդաւորապէս հալըը քնած չէր և տղալի ամեն մէկ խօսքը պարզ լսում էր: Մալլն էլ խօսին վեր թռաւ տեղից և դուռը բացեց: Ստեփանը տնքանքում էր իւր բեռի ծանրութեան տակ:

Շուտով գոմի դուռը բաց, ասաց նա մօրը:

Մալլն յառաջ վազեց, տղան էլ ետեից. և մինչեւ որ գալլի խելքը գլուխը կըդար, Ստեփանը նորան շտապ շտապ գցեց գոմի մի անկիւնում և դուռը վրայից կողպեց:

Այդ ժամանակ միայն նա զգաց, թէ որչափ թուլացել ու գադրել է:

Համարեա ուշքը գնացած նա ընկաւ մօր գիրկը և նորա օգնութեամբ հազիւ հազ սենեակ մտաւ. Բայց նա դեռ չէր կորցրել իւր աշխորժը և ուրախ ուրախ ասաց հօրը.

Հալրիկ ջան, հաւատու ինձ, ես գլուխս չկորցրի:

Այդ խօսքերն ասելուց յետով, նա

իսկոյն ուշաթափուեց և բաւական երկար ժամանակ ուշքի չէր գալիս: Դորա պատճառն այն էր, որ նա շատ էր յոգնել և արիւն էր կորցրել: Նորան անկողնի մէջ դրին, վերքերը կապեցին և մի քանի օրից լետոյ նա բոլորովին լաւացաւ:

Հայրն էլ առողջացաւ. նորան գեղն օգնեց. գուցէ և որդուն հիւանդ տեսնելով, իրան ցաւը մոռացաւ և նորան շատ սիրելուց լաւացաւ: Երբ հայր ու որդի բոլորովին առողջացան, գալիին սպանեցին և Ստեփանը բացի գովասանքից ընծալ ստացաւ և նորա մորթին:

Յետոյ գիտէք ինչ պատահեց. բոլոր լրագրներում տպեցին քաջ Ստեփանի մասին և նորա լաւ անունը հասաւ մինչև անգամ թագաւորի տկանջը:


Օհօ, ինչ լաւ են այդպիսի նորահաս երիտասարդները, որոնք վտանգի ժամանակ չեն զփոթվում. կարելի է լաւ գործեր տալ այդպիսիներին, ասաց թագաւորը:

Եւ նա Ստեփանին կանչեց իրան մօտ ու պատուիրեց, որ էլի մէկ անգամ նա կըկնէ գալի պատմութիւնը: Ալդ պարզ ու քաջ տղային թագաւորը շատ հաւանեց և պահեց իրան մօտ պալատում, լաւ ուսում տուեց և լետոյ նորան տեղաւորեց թիկնապահ գնդի մէջ:

Մի քանի անգամ պատերազմ գնալուց լետոյ Ստեփանին գեներալութիւն տուին: Թագաւորը, նոյնպէս և ամենքը նորան շատ ու շատ հաւանում և սիրում էին: Բայց թէ ինչո՞ւ. որովհետեւ Ստեփանն երբէք չէր շփոթվում և գլուխը կորցնում փորձանք պատահած ժամանակ:



10/9/49



509

0004684

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0004684

Նոյն թարգմանչինն է

1.	Յովհան Գուտտենբերգ	.	.	.	—	15
2.	Դօքտօր Զէններ	.	.	.	—	20
3.	Մանկական թատրոն	.	.	.	1	—
4.	Երսէնի, Նօրա	.	.	.	—	30
5.	Լիլ Արքայ	.	.	.	—	5



ԳԻՆՆ Է Յ ԿՈՊ.